

Վարդան Զ. Պետրոսյան  
Բանաս. գիտ. թեկնածու

## ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԵԱՅ ԵՎ ԵԱԻ ԵՌԱԲԱՐԲԱՌԱԿԵՐՊԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Տարածամանակյա քննության փորձ\*

**Բանալի բառեր**– եռաբարբառակերպ, փոխառություն, բնիկ հնդեվրոպական, ուրարտական, շումերական, իրանական, խաչավորում, սուբստրատային իրողություն:

Հին հայերենի եռաբարբառային կազմություններին համաժամանակյա հայեցակետով անդրադարձել են գրեթե բոլոր հայերենագետները, որոնց հետաքրքրել են առհասարակ հին հայերենի հնչույթաբանության հարցերը, իսկ պատմական հայեցակետով առանձին դիտարկումները, որոնք արտացոլում են եռաբարբառային կազմությունների հնչույթափոխության դեպքերը, վերաբերում են գրաբարից աշխարհաբար անցման հոլովույթին (Մ. Աբեղյան, Հ. Աճառյան, Է. Աղայան, Ա. Աբրահամյան, Ս. Ղազարյան, Հ. Մուրադյան և այլք), հետևաբար դուրս են թողնում այդ կազմությունների ծագման հարցը: Հին հայերենի եռաբարբառային կազմություններից միայն *եայ*-ի ծագման վերաբերյալ նկատառումներ են հայտնել Հ. Պեղերսընը, Գ. Զահուկյանը և Ա. Աբրահամյանը:

Կատարյալի հիմքում **ի** թույլ բաղադրիչն ունեցող բայերի **եայ** վերջավորության ծագման առնչությամբ Հ. Պեղերսընը նշում է. «**Հանգիստ սեռ. հանգստեան**, (բայց՝ **հանգչիմ** կտ. **հանգեայ**) բառին **ի** տառը յայտնի է թէ արմատէն ծագած է. կտ.ի –**եայ** վերջաւորութիւնը յամենայն դէպս **\*իայ**է յառաջ եկած է»<sup>1</sup>:

Գ. Զահուկյանը **հնագույն հայերենի** (մ.թ.ա. XII դարից մինչև մ. թ. IV դ.) **վաղ հնագույն** փուլում (մ.թ.ա. XII դարից մինչև մ.թ.ա. IV դ.) հնարավոր է համարել *iaı, uai, uau* և *uoi* եռաբարբառների տարբերակումը<sup>2</sup>, որոն-

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 10.03.2017:

1 Տե՛ս **Պեղերսըն Հոլգեր**, Նպաստ մը հայ. լեզուի պատմութեան, Վիեննա, 1904, էջ 37:

2 Շրջանաբաժանումն ըստ Գ. Զահուկյանի (տե՛ս **Զահուկյան Գ. Բ.**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 346): Որքանով խոսքը մի ժամանակաշրջանի մասին է, որի վերաբերյալ գրավոր վկայություններ չկան և որևէ տեսակետ ներկայացնելու համար պիտի դիմել պատմահամեմատական և տիպաբանական քննությունների, հետևաբար խոսք կարող է լինել միայն գիտական վարկածի մասին:

Թ. (ԺԵ) ԳԱՐԻ, ԹԻՎ 1 (57), ԽՈՍՎԱՐ-ՆԱՐԿ, 2017

ՎԿԱ ԿԱՄԱՆԱՅԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՒՆ

ցից *iai*-ը գրաբարյան հայերենի **եայ**-ի նախաձևն է<sup>3</sup>: Եթե ընդունենք, որ վաղնջահայերենի \**u*-ն հին (գրաբարյան) հայերենում տվել է **ու**, իսկ **ու**-ն էլ պարզ ձայնավոր էր ([*u*]) և ոչ թե երկբարբառակերպ ([*ow*]), ինչպես որ հակված ենք կարծելու մենք, ուրեմն շուրջ հազար տարվա ընթացքում նշված եռաբարբառներից *uai*-ն էլ վերածվել է **ուայ**-ի, *uoi*-ը **ուոյ**-ի, իսկ *uau*-ն **ուաւ**-ի: Դա նշանակում է, որ Գ. Զահուկյանը (և ոչ միայն նա) 5-րդ դարում ևս **եայ**-ի *j*-ին վերագրել է [*i*] հնչյունական արժեք<sup>4</sup>:

Ըստ Գ. Զահուկյանի՝ **եայ**-ը առաջացել է « **-ի** հիմքային տարրից և **-այ** բաղադրիչից, որ հավանաբար նույնն է **-այք** ածանցի **-այ**-ի և թերևս հատուկ անունների **-այ** վերջավորության հետ», ուր **ա**-ից առաջ բառավերջի **-ի**-ն դարձել է **ե** (հմմտ. \**այծի-այծեայ*, սիրտ, **-ի**, սրտեայ և այլն), ապա համարանությամբ տարածվել է նաև «սկզբնապես **-ի**-ով չվերջացող հիմքերի վրա», այդ թվում՝ բաղարկվել է նաև «օտար կազմությունների համապատասխան ձևերի հետ» (հմմտ. **քաղղեայ**-ասոր. *xaldāyā*, **հրեայ**-ասոր. *ihudāyā*): Այդպես իրանական ծագման \**ašt* (պիլ.), *aršti* (զնդ.) ձևերից առաջացել են հայերենի **աշտեայ**, *dušn* (պրսկ.), \**dušn* (պիլ.) ձևերից **դժնեայ** բառերը<sup>5</sup>:

Ա. Աբրահամյանի կարծիքով **եայ**-ը իրենից ներկայացնում է **եա+յ**, այսինքն՝ **եա** երկբարբառի և բառավերջյան *j*-ի միացություն<sup>6</sup>: Այս պատկերացման հիմքում հին հայերենին բնորոշ իրողությունն է, ըստ որի՝ հին հայերենում բառը չէր կարող վերջանալ **ա** և **ո** ձայնավորներով (հայտնի բացառություններով). այդ ձայնավորներից հետո այն պիտի ստանար *j* կամ **ւ**՝ ըստ այդմ ձևավորելով երկբարբառակերպ կամ եռաբարբառակերպ (հմմտ. **արբայ**, **ընծայ**, **գոյ**, **երեկոյ**, տիտան**աւ**, Հոմեր**աւ**, ծով**ու**, ծան**ու** և այլն)<sup>7</sup>:

**եայ**-ի և առհասարակ հին հայերենի եռաբարբառային կազմությունների ծագման առնչությամբ Հ. Աճառյանը ուղղակի նկատառումներ չունի, սակայն նկատի ունենալով, որ ըստ նրա՝ «**եա** երկբարբառը ծագում է հնագույն **իա** ձևից»<sup>8</sup>, իսկ **եա**, **եայ**, **եաւ** կազմությունները նա քննում է որպես փոխկապակցված իրողություններ, պիտի կարծել, որ առնվազն **եայ**-ը ևս համարում է **իա**-ի հիմքից սերված՝ **իա>եա>եա+յ>եայ** անցումներով: Հետևաբար, տրամաբանական կլինի աճառյանական պատկերացման հիմքում ևս տեսնել **եայ**-ի՝ «**եա** երկբարբառ+յ» ծագումնաբանական քանաձևը<sup>9</sup>: Եթե նկատի ունենանք նաև, որ Հ. Աճառյանը բառավերջի

3 Տե՛ս **Джаукян Г. Б.**, Сравнительная грамматика армянского языка, Ер., 1982, էջ 28:

4 Տե՛ս **Джаукян Г. Б.** նույն տեղում, **Աղայան Է. Բ.**, Գրաբարի քերականություն, հատ. I, հնչյունաբանություն, Եր., 1964, էջ 91-92): Ըստ էության, նույն պատկերացումն է նաև Հ. Մուրադյանի մոտ (տե՛ս **Մուրադյան Հ. Գ.**, Հայոց լեզվի պատմական քերականություն, հատ. I, Հնչյունաբանություն, Եր., 1982, էջ 196-199

5 Տե՛ս **Զահուկյան Գ.**, Հին հայերենի վերջածանցների ծագումը//Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, պրակ 2, Եր., 1998, էջ 21:

6 Տե՛ս **Աբրահամյան Ա. Ա.**, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 14:

7 Ի տարբերություն *j*-ի, որը ավանդական արտասանությամբ չի արտաբերվում, **ւ**-ը, որպես ինքնուրույն բաղադրիչ, չի արտաբերվում միայն **ու**-ի կազմում, որովհետև **ու**-ն վերածվել է պարզ ձայնավորի: Սակայն 5-րդ դարում և նախագրաբարյան հայերենում, մեր կարծիքով, **ւ**-ը եղել է ինքնուրույն հնչույթ, հետևաբար ունեցել է իր հնչյունական արժեքը:

8 **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի (այսուհետև՝ ԼՔՀԼ), հատ. VI, Եր., 1971, էջ 609:

9 Հմմտ. «**ա** և **ո** ձայնավորներից հետո և **եա** երկբարբառից *j* կիսաձայնի ներմուծումը այնքան սովորական էր....» (**Աճառյան Հ.**, ԼՔՀԼ, էջ 621):

կիսաձայնները չի նույնացրել ոչ ձայնավորի, ոչ էլ բաղաձայնի հետ<sup>10</sup>, կարելի է եզրակացնել, որ **եայ**-ի նախաձև է համարել ոչ թե \*iai, այլ «\*ia+y» կառույցը: Թերևս ասվածի մասին է վկայում այն, որ նա **Հրեայ** և **Քրիստոնեայ** բառերի ստուգաբանության առիթով **եայ**-ը միանաշանակ համարել է «հայերէն վերջավորութիւն»<sup>11</sup>:

Հայտնի է, որ հ.-ե. նախալեզվում համեմատաբանները եռաբարբառներ չեն վերականգնում: Պատճառը պարզ է. եռաբարբառներ չեն տարբերակվում նաև հ.-ե. հին լեզուներում<sup>12</sup>: Դա նշանակում է, որ հին հայերենի եռաբարբառային կազմությունների առաջացումը վերաբերում է նրա ինքնուրույն զարգացման պատմությանը, ավելի ստույգ՝ նախագրաբարյան փուլին, որովհետև V դ. գրաբարյան մատենագրության մեջ արդեն իսկ առկա են այն բոլոր եռաբարբառային կազմությունները, որոնք մենք տարբերակում ենք հին հայերենում:

Տեսականորեն հին հայերենի եռաբարբառային կազմությունները կարող են լինել՝ 1) սեփական բառակազմական գործընթացների արդյունք, 2) փոխառություն, 3) սուբստրատային իրողություն՝ լայն առումով, ինչպես նաև 4) կրել խաչավորված բնույթ, այսինքն՝ լինել նշված տեսակների գուգորդում:

Եռաբարբառային կազմությունների առաջացման հարցը պարզելու առումով կարևոր նշանակություն ունի, թե հին հայերենի բառակազմության մեջ այդ բաղադրիչներն ինչ մասնակցություն են ունեցել:

**եայ** -ը առկա է բացառապես բառավերջի դիրքում: Այն՝ ա) ածանց է, որը բաղադրում է գոյականներ (հմմտ. անդեղ**եայ** «հակաթոյն», աշտ**եայ**, ավսե**այ**, գրե**այ** «կռունկ»<sup>13</sup>, կրե**այ**, հրե**այ**, միջօրե**այ**, պաշտօնե**այ**, քաղե**այ** «թևի զարդ», բուե**այ** «հմայական քար», քաղե**այ**/քաղդե**այ** «աստղահմայությամբ զբաղվող», քրիստոնե**այ** և այլն) և ածականներ (հմմտ. անձնե**այ** «խոշորակազմ, թիկնավետ», բրդե**այ** և այլն, բ) վերջավորություն է, որն առկա է ինչպես մի շարք բայերի խոնարհման (հմմտ. այտե**այ** (=ուռեցի), զարթե**այ**ք (=արթնացաք), մարտե**այ**ց (ստոր. II ապոն., «մարտնչելու եմ, մարտնչեմ, կմարտնչեմ»), մարտե**այ**ք (բուն հրամ., «մարտնչեցեք»), ոստե**այ** (=ոստնեցի, ցատկեցի), ծանե**այ**ց (ստոր. II ապոն., «ծանաչելու եմ, կծանաչեմ, ճանաչեմ»), այնպես էլ -է (Հոփսիմե**այ**-Հոփսիմե**այ**), -էաս (Անդրէաս-Անդրե**այ**), -էէ (Բերսաբէէ-Բերսաբե**այ**), -ի (Եսայի-Եսաե**այ**), -իա (Կեսարիա-Կեսարե**այ**), -իս (Արտեմիս-Արտեմե**այ**), -ոս (Անդրոնիկոս-Անդրոնիկե**այ**) վերջն ունեցող որոշ փոխառյալ հատուկ անունների հոլովական (եզ. սեռ.-տր.-ի) հարացույցներում:

10 Աճառյան Հրայր, Հայոց գրերը, Եր., 1984, էջ 585-589:

11 Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հատ. III, Եր., 1977 էջ 134 և հատ. IV, Եր., 1979, էջ 601:

12 Ավելին, դրանց մեծ մասը աղքատ են նույնիսկ երկբարբառներով: Հին հնդկերենը, որին երկար ժամանակ նախապատվություն է տրվել հ.-ե. նախալեզվի հնչույթային համակարգը վերականգնելիս, չի պահպանել հ.-ե. երկբարբառների մեծ մասը: Երկբարբառներով հարուստ էր միայն հին հունարենը:

13 Աճառյան Հ., ԼԲՀԼ, էջ 621: Այդ ձևը չունեն ոչ ՆՀԲ-ը, ոչ էլ Ռ. Ղազարյանի «Գրաբարի բառարանը». առաջինը «կռունկն, կոնկունք» նշանակությամբ ունի «ԳԲԷԲ կամ ԳԲԷԲ» (տես Նոր բառգիրք հայկազեն լեզուի, հատ. I, Եր., 1979, էջ 587), իսկ երկրորդը՝ ԳԲԷ (Ղազարեն Ա. Ս., Գրաբարի բառարան, հատ. Ա, Եր., 2000, էջ 344): Այս առնչությամբ Հ. Աճառյանը նկատում է, որ բառարանում մեկական անգամ գործածված գրե**ան** և գրե**ից** ձևերից հնարավոր չէ որոշել՝ գրե**այ**-ն է ուղիղ ձևը, թե գրե**է**-ն (տես Աճառյան Հ., նույն տեղում):

**Եաւ**-ը՝ ա) արմատի բաղարկիչ է, որը կարող է լինել ինչպես բառակցքում (**Եաւթն** «յոթ»), այնպես էլ բառամիջում (գ**Եաւ**ղ «գյուղ») և բառավերջում (ս**Եաւ** «սև»)։ Բ) վերջավորություն է՝ գրծ. հլ. ցուցիչ (հմմտ. այ-գ**Եաւ** (<այգի+աւ) եկեղեց**Եաւ**, կարաս**Եաւ**, կղզ**Եաւ**, մաք**Եաւ**, տեղ**Եաւ**, մ**Եաւ**ք (նաև՝ մ**Եաւ**ք) «մեզանով», ձ**Եաւ**ք (ձ**Եաւ**ք) «ձեզանով», իր**Եաւ** (իրեւ, իրեւամբ) «իրենով», Գալիլ**Եաւ** (Ու.-Հ.-Գալիլիա, Ս.-Տ.-Գալիլեայ), Կեսար**Եաւ**, Ման**Եաւ** (Ու.-Մանէ, Ս.-Տ.-Մանեայ), Տիգրանուհ**Եաւ** և այլն)։ **Եաւ** վերջն ունեն նաև մի շարք մակբայներ (հմմտ. բար**Եաւ** (=բարով, հաջողությամբ), հաւաստ**Եաւ** (=հավաստի, ստուգապես), (գ)առաջ**Եաւ** (=առջև), զգուշ**Եաւ** (=զգուշորեն), հեշտ**Եաւ** (=հեշտաբար, դյուրությամբ), ստոր**Եաւ** (=ստորև, ներքևում), արդ**Եաւ**ք (=իրավ, անշուշտ ևն)), որոնցում ևս, ըստ ամենայնի, այն գործիականի վերջավորությունն է։ Մյուս հոլովածները պահպանել են ոչ բոլոր բառերը, իսկ գործիականի ձևն էլ հետագայում ենթարկվել է զանազան վերափոխումների։ Նշվածներից, օր., բար**Եաւ**-ը բարի-ի եզ. գրծ. հոլովածն է (հմմտ. Ս.-Տ.- բարւոյ, Բ.- ի բարւոյ, Գ.- բարեաւ), որը այդ կերպ ստացել է մակբայական նշանակություն։ Որոշները ունեցել են տեղի (հմմտ. առաջ**Եաւ**, ստոր**Եաւ**) և ձևի (հմմտ. հաւաստ**Եաւ**, զգուշ**Եաւ**, հեշտ**Եաւ**) մակբայների նշանակություն, իսկ արդ**Եաւ**քը գործածվել է որպէս «թարմատար՝ յաւելադիր բառ»<sup>14</sup>։

I. Տարակույս չի հարուցում, որ **Եայ**-ը «ի+այ» (ավելի ճիշտ՝ «ի+ա+յ») բաղարկության արդյունք է՝ ա) բառի ուղիղ ձևում -ի հանգող գոյականների թեք՝ սեռ.-տր. հոլովածում (հմմտ. \*այծի-այծեայ, փայտի-փայտեայ, օղի-օղեայ/ք<sup>15</sup>), Բ) բայի խոնարհման ձևերում (անց. կատ., ստոր. 2-րդ ապմն., բուն հրամ. հմմտ. գարթի+այ>գարթեայ, մարտի+այ>մարտեայ, ոստի+այ>ոստեայ՝ բոլորն էլ կազմված կատարյալի հիմքից) և Գ) վերջնավանկային ի կամ իա բաղադրիչն ունեցող օտար հատուկ անուններում (հմմտ. Եսայի(+այ>Եսաեայ), Մարիա(>Մարեայ), Հերովդիա, Կեսարիա, Սամարիա, Տիբերիա և այլն)։ Պիտի կարծել, որ մյուս օտար հատուկ անունները, որոնք չունեն նշված վերջավորություններից և ոչ մեկը, բայց սեռ.-տր.-ում ունեն -եայ վերջը, այդ ձևը կազմել են նախորդների համաբանությամբ։ Իհարկե, ի տարբերություն բայական ձևերի, որոնցում սկզբունքը գործել է առանց բացառությունների, օտար անունների դեպքում, գրեթե անհնարին է օրինաչափություն մատնանշելը<sup>16</sup>։

**Եայ**-ի «ի+այ» կազմությունն դժվար է ցույց տալ ածանցական արժեքով գործածության դեպքում։ **Եայ** ածանցի համար բնութագրական է, որ բառաձևերից շատերում այն հերթագայվում է **Է**-ի հետ (հմմտ. ափս**Եայ**-ափս**Է**, աշտ**Եայ** //-**Է**, քու**Եայ** //-**Է**, միջօր**Եայ** //-**Է**, հր**Եայ** //-**Է**ի, պաշտաւ-ն**Եայ** //-**Է**ի, քրիստոն**Եայ** //-**Է**ի, քաղ**Եայ** //-**Է**ի և այլն) և -**Է**-ով հիմքային տարբերակից են բաղադրվում հոլովական թեք ձևերը (հմմտ. հր**Է**ից, քրիստոն**Է**ից, պաշտաւն**Է**ից, քաղ**Է**ից և այլն)։ Դա նշանակում է, որ ուղիղ

14 Ղազարեան Ռ. Ս., նշվ. աշխ., էջ 206։

15 Հ. Աճառյանը օղեայք ձևը դնում է «անկախ կամ արմատական բառերի» շարքում (տե՛ս Աճառյան Հ., ԼՔՀԼ, էջ 621), սակայն բառի եզ. ուղղականի ձևն է օղի «ոչխար» (տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հատ. 2, Եր., 1981, էջ 1023, Ղազարեան Ռ. Ս., Գրաբարի բառարան, հատ. Բ, Եր., 2000, էջ 649), իսկ օղեայք (նաև՝ օղիք) «ոչխարներ» և օղեաց «ոչխարների», համապատասխանաբար, հզն. ուղղ. և սեռ.-տր. հլ.-ների ձևեր են։

16 Օտար հատուկ անունների ընդարձակ ցանկը տե՛ս Աճառյան Հ., ԼՔՀԼ, հատ. 3, Եր., 1957, էջ 470-486։

ձևում **-ի** հիմքային տարր հնարավոր չէ ենթադրել: Նկատի ունենալով, որ հանդիպում են նաև **-այ** // **-եայ** տարբերակային ձևերով գործածվող բառեր (հմմտ. անդեղ**այ**//անդեղ**եայ**, կձ**այ**//կձ**եայ** («մարմարից պատրաստած, շինած»), միջերկր**այ**//միջերկր**եայ**, փղոսկր**այ**//փղոսկր**եայ**, որկոր**այ** //որկոր**եայ** և այլն), Գ. Զահուկյանը **եայ** ածանցի ծագումը ևս բացատրում է **-ի** հիմքային տարրն ունեցողների համաբանական տարածումով, այդ թվում՝ փոխառյալ բառերի վրա (հմմտ. հր**եայ**, մծղն**եայ**, քաղ**եայ**)<sup>17</sup>:

Առավել հավանական է, սակայն, **եայ** վերջածանցի փոխառություն լինելը, ընդ որում՝ առնվազն երկու լեզվից. այն հայերենին կարող էր անցնել ինչպես վաղ իրանական, այնպես էլ ասորական փոխառությունների միջոցով: Իրանական լեզուների առումով ուշագրավ է հետևյալը: Հին պրսկ. (i)ya, ավեստ. ya վերջածանցը անվանական հիմքերից կազմում է ածականներ և գործողի անուններ. ավ. gaēθya «աշխարհային», «աշխարհիկ»՝ gaēθa «աշխարհ» բառից, հին պրսկ. hamičiya «խոովարարական», «խոովարար»՝ ha-(<ham)+miça- «ընկեր»: Այս երևույթին «վերաբերում են նաև հին պրսկ. էթնիկական անվանումները. arminiya- «հայ»՝ Armina-ից «Հայաստան», aθuriya «ասորի»՝ Aθura-ից «Ասորեստան»<sup>18</sup>: Բառացի arminiya- նշանակում է «հայաստանցի», aθuriya-՝ «ասորեստանցի», այսինքն՝ անձի բնութագրում ըստ ծննդավայրի կամ բնակության վայրի: Լայն առումով՝ (i)ya, ya-ն ցույց է տալիս որոշարկում, որը մի դեպքում կարող է արտահայտել հատկանշային, մեկ այլ դեպքում՝ վերաբերության իմաստ:

Հին հայերենի ասորական փոխառություններից են **հրեայ**<sup>19</sup> (Ἡῦδαῖα), **մծղնեայ** (mašalləyānē)<sup>20</sup>, **քաղդեայ** (**քաղդեայ**) (xaldāyā), **քուեայ** (quwāyā)<sup>21</sup>, որոնք վերջում ունեն -ya մասնիկը<sup>22</sup>: Այս բառերի սկզբնական նշանակությունները (տե՛ս 20-23 ծանոթագրությունները) նույնպես վկայում են որոշակի հատկանիշի մասին:

Ասվածից կարելի է եզրակացնել, որ **եայ**-ը ունեցել է երկակի ծագում. 1) հայերենի ներքին բառակազմական միջոցներով, այն է՝ «-ի+(ա+յ)» (իմա՝ «հիմքի բաղադրիչ (-ի)+բնի ձայնավոր(ա)+վերջավորություն(յ)») բաղադրությամբ, 2) իրանական և ասորական փոխառությունների միջոցով: Այնուհետև համաբանությամբ տարածվել է նաև այդ միջոցներից և ոչ մեկին չվերաբերող բառերի վրա (հմմտ. **անձնեայ**, **բրդեայ**, **լռեայ**, **միջերկրեայ**, **որկորեայ** և այլն): Ինչ վերաբերում է **-այ** վերջավորությանը, որի և **-ի** հիմքային տարրի միացությունից, ինչպես ասվեց, առաջացել է **-եայ** վերջավորությունը, հատուկ անունների դեպքում այն գալիս է «ա» հոլովման եզ. սեռ.-տր. ձևից (հմմտ. Արշակ**այ**, բայց՝ Հերակ**եայ**), իսկ այլ

17 Տե՛ս Զահուկյան Գ., նույն տեղում, էջ 21:

18 Расторгуева В. С., Древнеперсидские языки // Языки Азии и Африки, т. II, М., 1978, с. 27:

19 Նաև **հրեայ**, այսինքն՝ «Յուդայեան» (տե՛ս ՆԲՀ, հ. II, էջ 141), այն է՝ «Հրեական ժողովրդին պատկանող անձ» (տե՛ս **Ղազարեան Ռ. Ս.**, նշվ. աշխ., հատ. Բ, էջ 100):

20 Մծղնեայ աղանդը և այդ աղանդին պատկանող: Գործածվում է «պիղծ, պղծագործ» նշանակությամբ (տե՛ս ՆԲՀ, հ. II, էջ 284, **Ղազարեան Ռ. Ս.**, նույն տեղում, էջ 194):

21 Ըստ Հ. Աճառյանի՝ «թերևս արամ. թալմ.» փոխառություն (տե՛ս **Աճառյան Հր.**, ՀԱԲ, հատ. IV, Եր., 1979, էջ 590):

22 Օրինակներն ըստ **Աճառյան Հ.**, Հայոց լեզվի պատմություն, I մաս, Եր., 1940, էջ 339-342: Ըստ երևույթին այդ բառերի շարքին պիտի դասել նաև **հեզնեայ** (hegyānā) «այբուբեն» (հեզ հəyā «վանկ» բառից) բառը՝ նկատի ունենալով, որ շատ փոխառյալ բառեր հայերենում գործառել են **-եայ** // **-այ** տարբերակային ձևերով (տե՛ս նույն տեղում):

դեպքերում էլ հունարենի հգն. ուղղ. -αι վերջավորությունից (հմմտ. ἀγωνισαί «մարտիկներ»/ազոնիստայթ «պայքար, մրցանք», ἀθληταί / աթ-դեստայթ «ըմբիշներ»)»<sup>23</sup>:

**II. Եաւ-**ի դրսևորման վերոհիշյալ դեպքերից ուշադրության արժանի է հատկապես առաջինը, այն է՝ որպես արմատի բաղադրիչ (**Եաւթն**, **գԵաւղ**, **սԵաւ**): Մյուս երկու դեպքերն ընդհանուր առմամբ նույն տրամաբանության մեջ են, ինչ որ **Եայ-**ի համապատասխան դրսևորումները, այն է՝ «-ի+(ա+լ)» (հմմտ. կղզի+աւ>կղզեաւ «կղզիով», տեղի + աւ>տեղեաւ «տեղով», Կեսարիա+աւ>Կեսարեաւ «Կեսարիայով» և այլն): Իսկ գործիականի վերջավորությունների (-բ, -ւ<sup>24</sup>, -վ) նախածն է համարվում հ.-ե. գործ. \*-bhi հոլովական ցուցիչը:

**ՍԵաւ-**ը իրանական փոխառություն է (հմմտ. պրսկ. siyāh, պիլ. \*siyāv, գենդ. syāva)<sup>25</sup>, այսինքն՝ այստեղ առկա է նույն (i)ya/ya ածանցը, ինչ որ, օր.՝ աշտեայ բառի մեջ:

Ըստ Հ. Աճառյանի՝ **Եաւթնի** ավելի հին ձևն է **Եւթն**<sup>26</sup>: Վերջինը սերում է հ.-ե. \*septm նախածնից (ցեղակիցներն են՝ սնսկ. septa, գնդ. hapta, լատ. septem, հուն. ἐπτά, հն ռուս. сем): Ըստ այդմ՝ **Եւթնի** եռաբարբառացումը, որից էլ առաջացել է **Եթն** ձևը՝ աւ>օ հնչյունափոխությամբ, համեմատաբար ուշ երևույթ է<sup>27</sup>: Իսկապես էլ, \*septm>**Եաւթն** անմիջական անցում ենթադրելու դեպքում անբացատրելի է **ա-**ի առկայությունը. եթե հ.-ե. բառակզբի \*s-ը կարող էր տալ **հ**, որը թույլ լինելու պատճառով ընկել է, ինչպես «և շատ հույն բարբառներում»<sup>28</sup>, \*-e-ն՝ **հյ**. **-ե-** (համարժեքներն են հնդիրանական -a-ն և հուն., լատ. e-ն), \*-p-ն տվել է **ւ**, իսկ \*-tm-ին (ինչպես և հուն. -τα-, սնսկ. -ta, լատ. -tem) համապատասխանում է **հյ**. **-թն-**ը, ապա **Եայ-**ի **ա-**ի համարժեքը բացակայում է ցեղակից ձևերում: Ասվածը բավարար հիմք է կարծելու, որ իսկապես ավելի հին պիտի համարել **Եւթն** ձևը, իսկ **Եաւթն**-ը ավելի ուշ՝ թերևս գրաբարյան փուլի նախօրյակին առաջացած բարբառային տարբերակ է, որը նույնպես տեղ է գտել գրաբարյան մատյաններում և նախնական **եւ-**ին զուգահեռ գործածվել:

Պիտի նկատել, որ հայերենի զարգացման ընթացքում տեղի են ունեցել ինչպես հնչույթների պարզեցման (հմմտ. **աւ>օ**, **Եա>Ե** (մատուցեաւ>մատուցել), այնպես էլ, ընդհակառակն, բարդացման (հմմտ. **ե[է]>յ[է]**. երեկ-լերեկ>լերեկլ,- **ոլո[լ]>վո[լ]**. ոճիր [օճիր] > [վօճիր]) գործընթացներ: Հետևաբար, միանազամայն օրինաչափ է ինչպես եռաբարբառների երկբարբառացումը և նույնիսկ ձայնավորացումը, այնպես էլ երկբարբառների եռաբարբառացումը, պարզ ձայնավորների երկբարբառացումը կամ վերածումը երկհնչյունի, որը տեղի է ունեցել գրաբար-միջին հայերեն-աշխարհաբար անցումային փուլերում: Ինչ վերաբերում է **Եաւթն/Եւթն** տարբերակային ձևերից որևէ մեկի նախնականության պարզաբանմանը, այդ հարցի վրա լրացուցիչ լույս կարող է սփռել **գԵաւղ // (գԵւղ//գիւղ)** բառի ստուգաբար-

23 Աճառյան Հ., նշվ. աշխ., II մաս, Եր., 1951, էջ 10, **Ջահուկյան Գ.**, Հին հայերենի վերջածանցների ծագումը//Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, պրակ 2, Եր., 1998, էջ 11:

24 Ի-ի համար տե՛ս, օրինակ, **Պեղերսն Հոլգեր**, նշվ. աշխ., էջ 6:

25 Տե՛ս Աճառյան Հ., նույն տեղում, էջ 284, **Ջահուկյան Գ.**, ՀԼՊԵԺ, էջ 543:

26 Տե՛ս Աճառյան Հ., ԼԲՀԼ, հատ. I, Եր., 1952, էջ 245:

27 Տե՛ս Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, I մաս, Եր., 1940, էջ 33:

28 Աճառյան Հ., նույն տեղում, էջ 32:

նական քննությունը: Այս առումով ուրվագծվել է երկու հիմնական ուղղություն՝ հնդեվրոպական և ուրարտական:

**Գեաղ** // (**գեղ** // **գիղ**)-ի ծագումնաբանական առաջին վարկածներից մեկը հեղինակել է Հ. Պեդերսընը: Ըստ նրա՝ **գեղ**-ը սերվել է **ագանիմ**-ից («գիշերը մի տեղ օթևանել»), որի հարաբերակիցն է հունարենի *ιάω*-ն. սրանից «ածանցված» *αβλή*-ն նշանակել է «գաւիթ, բակ», ապա՝ «ագարակ (գիւղատուն)»: Նախաձևն է **\*ագել**, որն իր հերթին սերել է ավելի հին **\*agxel** ձևից<sup>29</sup>: Հ. Պեդերսընի վարկածի հիմքում հետևյալ հաստատումներն են. 1) **Լ**-ն եղել է կատկային՝ **չ**, որը հետո վերածվել է **ղ**-ի, 2) **ւ**-ը «գարգացած է իրեն յաջորդող **ղ** ձայնէ» (**գիղ**, սեռ.-տր. **գեղջ**), ինչպես և **իղ**, սեռ. **իղոյ** («նախախնամի յուն. *Ξλαιον* բառին հետ»), **երկիղ**, սեռ. **երկիղի**, **ճիղ**, սեռ. **ճիղոյ** և այլն<sup>30</sup>, 3) երկու ձայնավորների միջև եղել է ոչ թե սովորական **\*g**, այլ **\*gʷ**, այսինքն՝ շրթնահետնաքմային բաղաձայն, որն էլ պարզվել է **g**-ի, 4) բառասկզբի **a**-ն ընկել է: Հետևաբար, ըստ Հ. Պեդերսընի՝ **գեղի** ավելի հին ձևն է **\*geł** / **\*գեղ**- (այսինքն՝ առանց երկբարբառի), որը պահպանվել է սեռ.-տր. **գեղ-ջ** «գյուղի» ձևի մեջ:

Թեև Հ. Պեդերսընը հատուկ չի նշում **\*agxel**-ի հնդեվրոպական լինելը (նա հարցը քննում է թուրքական լեզուներում «գյուղ» բառի սկզբնաղբյուրի առնչությամբ), սակայն տարակույս չկա, որ համարում է այդպիսին, քանզի նշում է նաև հնդեվրոպական ցեղակիցներ:

**Գեղ (գիղ)**-ի ուրարտական ծագման վարկածը սկիզբ է առնում Գ. Ղափանցյանից: Հնագույն ձև դիտելով **գեղը**, և ոչ թե՛ **գեաղը** («որ բնավ հնագույն չէ...»<sup>31</sup>) Գ. Ղափանցյանն այդ բառի նախաձև է համարել ուրարտական *wel-* / (*xel-*) -ը (**> գեղ-**), որը, ըստ նրա, ամկա է հայերենի **Գեղարքունի**(-ք) (<ուրարտ. *Welikuni*) տեղանվան մեջ<sup>32</sup>: Գ. Զահուկյանը իր «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան» աշխատության մեջ չբացատրելով, որ «**գիղ (գեղ-)** բառի **գ-** նախահնչյունը» կարող է նաև «\*g-ի հետուրարտյան շրջանի ձևափոխությունը լինել (հմմտ. *Velikuni*>Գեղա(ր)քունի)» և այդպիսով, ըստ էության, չմերժելով Գ. Ղափանցյանի ստուգաբանությունը, հնարավոր է համարել **գիղ**-ի հոգնակին տեսնել *Giluarani*-ի մեջ (ըստ Գ. Մելիքիշվիլիու՝ «ինչ-որ տոհմա-ցեղային միավորի անվանում»): հմմտ... «... **գիղ**-ը հանդիպում է **գեղեան**, **գեղենի**, **գեղարայ-ք (գեղարէք)** հոգնակի-հավաքման ձևերով և *Giluarani*<sup>33</sup>-ի մեջ կարելի է տեսնել ինչ-որ հավաքական ձև»<sup>34</sup>: Սակայն հետագայում, ըստ ամենայնի՝ արժանահավատ չհամարելով վերոհիշյալ ստուգաբանությունը, «Հա-

29 Տե՛ս Պեդերսըն **Հոլգեր**, նշվ. աշխ., էջ 192-193: Հ. Պեդերսընը *\*agxel*-ից, այսինքն՝ *hj. gēlhi* նախաձևից, սերված է համարում թուրքական լեզուներում «գյուղ» նշանակող բառերը (հմմտ. դրդգ. *aul*, Կազանի թաթար. *auyl*, յակ. *yal* «դրացի», չերեմիս. *aul* «գյուղ, ավան» և այլն)՝ նախաթուրքերենի *\*agyl* ձևի միջնորդությամբ (տե՛ս նույն տեղում, էջ 190):

30 Պեդերսըն **Հոլգեր**, նշվ. աշխ., էջ 110:

31 Ղափանցյան Գ. Ա., Հայոց լեզվի պատմություն. հին շրջան, Եր., 1961, էջ 139:

32 Տե՛ս նույն տեղում: Այս տեղանունը Ի. Ի. Մեշչանինովը հիշատակում է *Velikuhi* ձևով: Դա Ուրարտուի թագավոր Սարգուրիի կողմից նվաճված Սևանի ավազանի չորս երկներից մեկն է, որը հիշատակվում է նրա թողած տարեգրության մեջ: Մյուս երկրներն են՝ Արքուքինի (*Arguqini*), Լուերուիսի (*Lueruhi*), Ադախունի (*Adahuni*) (տե՛ս **Мещанов И. И.**, *Аннотированный словарь Урартского (Биаинского) языка*, Л., 1978, էջ 384-387): Նկատի ունենալով, որ *Lueruhi*-ն ունի նաև *Lueruni* տառադարձումը, *Velikuhi*-ն նույնպես կարող էր տառադարձվել նաև *Velikuni*:

33 Այս դեպքում տպագրված է *Giluarani* (առանց առաջին *a*-ի), որը, կարծում ենք, վրիպակ է:

34 Զահուկյան Գ. Բ., ՀԴՊԾԺ, էջ 445:

յերեն ստուգաբանական բառարանում» նա **գիւղի** ծագումը փնտրել է հ.-ե. բառաֆոնդում. հմմտ. «Թերևս բնիկ հնդեվրոպական՝ \**ǵeik'-li-*(<sup>o</sup>)՝ \**ueik'-* «տուն-բնակատեղ, ավան» արմատից»: Համապատասխանաբար՝ **գեղջ** բառի համար էլ հնարավոր համարելով \**ǵeik'lias* նախաձևը<sup>35</sup>:

Նշված ստուգաբանությունները առերևույթ մեկը մյուսից շատ հեռու են, իրականում, սակայն, սկզբունքորեն տարբեր է միայն Գ. Ջահուկյանի առաջարկած երկրորդ վարկածը, իսկ առաջին վարկածի և Հ. Պեդերսընի ու Գ. Ղափանցյանի տեսակետների միջև կարելի է տեսնել որոշակի ընդհանրություն՝ չնայած այն իրողությանը, որ ուրարտերենի և հնդեվրոպական նախալեզվի ցեղակցական մերձավորության հարցը դեռևս համընդհանուր ձանաչում չի ստացել: Այդ տեսակետների համադրումը մեզ հուշում է, որ **գեղի** ծագումնաբանական ակունքները պիտի փնտրել ավելի լայն շրջագծում, քան դրանցից որևէ մեկն է: Մենք այդպիսին ենք համարում հնդեվրոպա-շումերա-ուրարտական լեզվական առնչությունները<sup>36</sup>: Չհավակնելով **գեղի** ստուգաբանության վերջնական և սպառիչ խոսքի՝ կարևոր ենք համարում, սակայն, անել հետևյալ նկատառումները. 1) Հ. Պեդերսընի կողմից **գեղի** համար առաջարկված \**aguel* նախաձևի հետ հնչույթային և իմաստային ընդհանրություն ունեն հ.-ե. \**ag'ros* «արտ, դաշտ, անդաստան» (հմմտ. հուն. *ἀγρός*, լատ. *ager*, սնսկ. *aĭra-s*, գոթ. *akrs*, հն իսլ. *akr* «ագարակ, արտ ...») և շում. *ager/agar*<sub>3</sub> «արտ, բակ, ագարակ»<sup>37</sup> բառերը. դա նշանակում է, որ կամ մեկը մյուսից փոխառություն է, կամ էլ երեքի աղբյուրը մեկ այլ լեզու է. 2) հ.-ե. և շում. ձևերի հետ հնչույթային և իմաստային ընդհանրություններ ունի *hj. ագարակ* (*agarak*) բառը, որը Հ. Աճառյանի կարծիքով փոխառություն է «թերևս փոքրասիական մի որևէ կորած հնդկերոպական լեզուից»<sup>38</sup>, իսկ Գ. Ջահուկյանը հնարավոր է համարել նրա շումերական փոխառություն լինելը՝ աքքադերեն *agar-ի* («դաշտ, արտ») միջնորդությամբ<sup>39</sup>: **Ագարակը**, ի թիվս «արտ», «անդաստան», «բակ», «կավածք» իմաստների, ունի նաև «գյուղ» իմաստը<sup>40</sup>. *hj. ագարակի-ակը*, ըստ ամենայնի, հետագա հավելում է, որը բառին ավելացրել է լրացուցիչ նվազական իմաստ, այն է՝ «փոքր գյուղ, կավածք»<sup>41</sup>. 3) շում. *ager* և *agar* ձևերի միջև տարբերությունը կարող է լինել ձայնդարձային՝ *e//a*, կամ էլ պարզապես պայմանավորված լինել աքքադական տառադարձությանը<sup>42</sup>. ըստ ամենայնի՝ բուն շումերական ձևը *ager-ն* է. 4) հետևաբար ուրարտերենի *ǵel-//ǵel-//ger-* արմատն էլ կարող է ընդհանուր ծագում ունենալ շում. *ager/agar-ի* հետ՝ *a-ի* անկումով. 5) երկրորդական չէ նաև այն իրողությունը, որ ինչպես հ.-ե., այնպես էլ ուրարտական *w//ǵ-ն*

35 Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 163:

36 Շումերերեն-ուրարտերեն-հայերեն առնչությունների հարցը:

37 Վերջին ձևի համար տե՛ս նաև **Գավթյան Արմեն**, Հայերեն-շումերերեն ընդհանրությունների բառարան, Եր., 2014, էջ 21: Անշուշտ, սա մի գնահատելի աշխատանք է, որն առայժմ անհրաժեշտ ուշադրության չի արժանացել:

38 **Աճառյան Հր.**, ՀԱԲ, հատ. I, Եր., 1971, էջ 77, 337: ՀԱԲ-ում քիչ չեն այդպիսի ձևակերպումներն այն բառերի առնչությամբ, որոնց ստուգաբանությունները Աճառյանին համոզիչ չեն թվացել:

39 Տե՛ս **Ջահուկյան Գ. Բ.**, ՀԼՊՆԺ, էջ 48, 452:

40 Տե՛ս նույն տեղում, էջ 77:

41 Այլ մասնիկի ծագումնաբանության մասին տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հին հայերենի վերջածանցների ծագումը/նշվ. աշխ., էջ 8:

42 Տե՛ս **Дьяконов И. М.**, Языки древней Передной Азии, М., 1967, էջ 50 (նաև՝ ծմբգր. 29), **Գավթյան Ա.**, նշվ. աշխ., էջ 11:



հայերենում բառասկզբում տվել են **գ** (հմմտ. ուրարտ. *Uelikuni* > *հյ. Գեղա(ք)ունի*, *հ.-ե. \*xel-<sub>1</sub>* > *հյ. գեղ*, *-ոյ*, *հ.-ե. \*xeikero* > *հյ. գիշեր*):

Նշված զուգահեռները ավելի քան բավարար հիմք են պնդելու, որ հայերենի **գեղ** բառի ակունքները պիտի որոնել՝ 1) կամ շումերա-ուրարտական լեզվական առնչություններում, 2) կամ էլ, եթե նրա նախածեր *հ.-ե. է*, ապա այն իր վրա կրում է շումերա-ուրարտական ազդեցությունների դրոշմը<sup>43</sup>: Ավածից հետևում է նաև մյուս եզրակացությունը (ի դեպ, հանուն որի էլ հարկադրված էինք դիմել այս չնախատեսված ստուգաբանական փորձին). **գեղ**//**գեաղ**//**գիղ** ձևերից և ոչ մեկը նախնական չէ. ըստ ամենայնի, նախնականը **գեղ** – տարբերակն է, որը պահպանվել է սեռ.-տր. **գեղ-ջ** (այստեղից էլ **գեղջուկ** «գյուղացի») ձևի մեջ: Այդ ձևից են սկսվել երկրաբառացման (եւ>իւ)<sup>44</sup> ու եռաբարբառացման (եւ>եաւ) գործընթացները:

Այսպիսով, արմատի մաս կազմող **եաւ**-ի համար կարելի է նշել ծագումնային երեք աղբյուր՝ 1) իրանական փոխառություն, 2) հնդեվրոպական և 3) շումերա-ուրարտական:

Ինչպես երևում է այս քննությունից, հին հայերենի **եայ** և **եաւ** եռաբարբառակերպերի տարբեր կիրառություններ ունեն միանգամայն տարբեր ծագում. դրանք բառակազմական գործընթացների արդյունք են, բնիկ են, այն է՝ ունեն հնդեվրոպական ծագում, կարող են լինել փոխառություն կամ ունենալ սուբստրատային բնույթ, լինել բնիկ և փոխառյալ բաղադրիչների համադրություն, այսինքն՝ կրել յուրօրինակ խաչավորման կնիք:

**Վարդան Զ. Պետրոսյան** – ԵՊՀ դասախոս, մասնագիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է ընդհանուր և համեմատական լեզվաբանության, կառուցվածքային լեզվաբանության, ընդհանուր և հայ հնչույթաբանության, մասնավորապես՝ հին հայերենի համաժամանակյա և տարաժամանակյա հնչույթաբանության հարցերը:

Էլ. հասցե՝ [vz.petrosyan@ysu.am](mailto:vz.petrosyan@ysu.am)

43 Վերջին տասնամյակներում հատկապես հայ-շումերական լեզվական առնչություններում արտահայտվել են ավելի համարձակ տեսակետներ, որոնցում շումերերենն ուղղակիորեն դիտարկվել է որպես հայերենի նախնական վիճակ: Այդպիսի երկերից է Ա. Դավթյանի վերոհիշյալ աշխատությունը («Մեր ելակետն այն է, որ շումերերեն կոչվածը մ.թ. ա. 3-րդ հազարամյակի հայերենն է»): Տե՛ս **Դավթյան Արմեն**, նույն տեղում): Եթե հայ-շումերական առնչություններում նմանօրինակ տեսակետի տարածման համար դեռևս որոշ ժամանակ կպահանջվի, ապա հայ-ուրարտական հարաբերություններում, ըստ էության, այդ փուլը հաղթահարված է և համոզված կերպով կարելի է ասել, որ ուրարտերենը հայերենի հնագույն դրսևորումներից է (տե՛ս նաև **Վահան Սարգսյան**, Ուրարտական քաղաքակրթությունը և բասկերի նախահայերնիքի հարցը, Եր., 1998): Ժամանակին գիտական խիզախում էին այս ոլորտում ակադ. Գ. Ղափանցյանի գործադրած ջանքերը (տե՛ս **Գր. Ղափանցյան**, Ուրարտուի պատմությունը, Յեր., 1940, էջ 5-51): Հ. Աճառյանի և հատկապես Գ. Ջահուկյանի համեմատաբար չափավոր վարքագիծը նույնպես ունեցել է իր պատճառները, այն է՝ առանց ծանրակշիռ կովանների չառաջադրել գիտական վարկածներ, որոնք կարող են բունեղանգի արդյունք ունենալ: Սակայն, դրանով հանդերձ, Գ. Ջահուկյանը առաջիններից մեկը, եթե ոչ առաջինը, խոսել է հնդեվրոպա-ուրարտական (հետևաբար՝ նաև հայ-ուրարտական) լեզվական «ավելի խոր կապերի մասին» (տե՛ս **Джаукян Г. Б.**, Урартский и индо-европейские языки, Ер., 1963, էջ 10): Ի դեպ, որի համար էլ քննադատվել է Ի. Դյակոնովի կողմից. հմմտ. «Բայց, ինչպես թվում է, Գ. Բ. Ջահուկյանը թերագնահատում է ուրարտերենի և խոռոչների միջև մերձավորության աստիճանը, իսկ ուրարտերենի բառակազմության մասին նրա տվյալները հաճախ ճիշտ չեն» (**Дьяконов И. М.**, նշվ. աշխ., էջ 165): Այդ նույն ժամանակահատվածում ուրիշների կողմից ուրարտերենի և հյուսիս-կովկասյան, մասնավորապես՝ նախյան լեզուների միջև ցեղակցական կապեր ցույց տալու փորձեր են արվել (նույն տեղում):

44 Հմմտ. նաև՝ առեւծ>առիւծ, հարեւ>հարիւր, ավեր>ալիւր, բեր>բիւր:

## Summary

### THE ORIGIN OF OLD ARMENIAN TRIPHTHONGOIDS *եւՅ* and *եւԻ* Attempt of an asynchronous study

Vardan Z. Petrosyan

**Key words** – triphthongoid, borrowing, native Indo-European, Urartian, Shumerian, Iranian, interbreeding, substrate reality

The article is an attempt to analyze the origin of the two of triphthongoid constructions of Old Armenian–*եւՅ* and *եւԻ*. This main issue is attractive particularly from the point of view that in the proto Indo-European language, Armenian being one of its “daughter languages”, the triphthongoids are not restored. Old Indo-European languages also lack them. Moreover, in the main part of the latter even the composition of the diphthongs is shortened, but they can be restored for Indo-European proto-language. The survey in the given article discovers that the triphthongoids *եւյ* and *եւի* have various applications and quite a different origin; they are native, borrowed (they are borrowings from various languages–Old Iranian, Assyrian, Urartian and Shumerian) and are even a synthesis of native and borrowed constituents as a result of word-formation processes.

## Резюме

### ПРОИСХОЖДЕНИЕ ДРЕВНЕАРМЯНСКИХ ТРИФТОНГОИДОВ *եւՅ* И *եւԻ* Попытка асинхронного исследования

Вардан З. Петросян

**Ключевые слова** – трифтонгоид, заимствование, исконный индоевропейский, урартский, шумерский, иранский, скрещивание, субстратная реальность

В статье делается попытка изучения происхождения двух трифтонговых сочетаний древнеармянского языка – *եւյ* и *եւի*. Этот вопрос интересен особенно потому, что в индоевропейском праязыке, одним из ответвлений которого является и армянский язык, трифтонги не реконструируются. Таковых нет также в древних индоевропейских языках. Более того, в большинстве последних сокращены даже дифтонговые сочетания, которые реконструируются для индоевропейского праязыка. В результате данного исследования становится ясным, что разное использование трифтонгоидов *եւյ* и *եւի* имеет совершенно различное происхождение: они исконны, заимствованы (притом, они являются заимствованиями из разных языков – древнеиранских языков, ассирийского, урартского и шумерского), даже как результат словообразовательных процессов являются сочетанием исконных и заимствованных компонентов.